

ԱՄԱՆՈՐԸ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՀԱՐԿԻ ՏԱԿ

1968 թվականի դեկտեմբերի 31. երեքշաբթի օր, և գիշեր՝ ամանորի:

Հոգևոր ճեմարանի հյուրընկալ հարկի տակ, ամանորական սեղանների շուրջ, համախմբվում են մի անգամ ևս Մայր Աթոռի միաբանությունը, Գեր. հոգ. խորհրդի, Վերստուգիչ հանձնաժողովի անդամները, «Էջմիածին» ամսագրի խմբագրական կազմը, ճեմարանի դասախոսներն ու ուսանողությունը, մայրավանքի ղեկավար պաշտոնեությունը, իրենց պարտքը կատարած աշխատանքի մարդկանց արդար խղճով և գոհունակությամբ միասին ճանապարհելու անցնող տարին, որը եղավ իրապես իրադարձություններով հարուստ տարի Մայր Աթոռի, մայր հայրենիքի և բովանդակ հայ ժողովրդի համար, հոգևոր-եկեղեցական, մշակութային, հայրենասիրական տեսակետից և վառ հույսերով, երազանքներով և պայծառ լավատեսությամբ ողջունելու նոր տարին, որը բացվում է մեր առաջ որպես նոր կյանքի սպիտակ մատյան:

Ժամը 20-ին Վեհափառ Հայրապետը մուտք է գործում ճեմարանի հանդիսությանց սրահը, ուրախ ծափահարությունների, երախտագետ ժպիտների ու սրտառուչ բարեմաղթությունների ներքո, նախագահելու ամանորական ավանդական սեղանին:

Հայոց Հայրապետը ուրախ տրամադրությամբ օրհնում է Մայր Աթոռի բարիքներով զարդարված նոր տարվա սեղանը, որի շուրջ ստեղծվում է ամանորի հատուկ խոհերով, մտորումներով օծուն, վանական ջերմիկ մթնոլորտ:

«Ցանկանալով ցանկացայ ուտել զՀատիկըն աշակերտօքս հանդերձ»:

Հանդիսության սկզբում հոտընկալս ունկընդրվում է Տերունական աղոթքը և Հայկական ՍՍՀ պետական հիմնի նվագը:

Ամանորին նվիրված երեկույթը բանալով հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Ներսես ծ. վրդ. Պոզապալյանը նշում է, թե ինչքան քաղցր ու ներշնչող է պահը, երբ մի անգամ ևս Հայոց Հայրապետի օրհնաբեր ներկայությամբ հավաքված Մայր Աթոռի միաբանությունը, ճեմարանի դասախոսական կազմն ու ուսանողությունը, վանքի պաշտոնեությունը, հոգևորական թե աշխարհական, գոհունակությամբ հրաժեշտ են տալիս անցնող տարվան և միասիրտ ու միակամ, սրտագին երախտագիտությամբ լցված դեպի համազգային այս սուրբ հաստատությունը, որ ամենայն հայոց Մայր Աթոռ ս. Էջմիածինն է, դիմավորում՝ նոր տարին:

Մայր Աթոռի լուսարարապետ տ. Հայկազուն արքեպիսկոպոսը, արտահայտելով բոլոր ներկաների խոհերն ու երախտագիտական զգացմունքները, առաջարկում է բաժակ բարձրացնել Մայր Աթոռ ս. Էջմիածնի անսասանության, պայծառության և նրա արժանավոր գահակալի՝ Հայոց Հայրապետի թանկագին կենաց արևշատության և Նրա եկեղեցանվեր, հայրենաշեն գործերի հաջողության համար:

Սրտագին բարեմաղթություններին ձայնակցում է ճեմարանի երգչախումբը հընչեցնելով վեհ և հանդիսավոր Մայր Աթոռի հիմնը՝ «Էջ միածինն ի հօրէ» շարականը:

11.257

Ն. Ս. Օծությունը խորապես հուզված ու բարձր տրամադրությամբ, նոր տարվա խոհերով, մտորումներով համակված Իր օրհնությունն ու ամանորական պատգամն է տալիս բոլոր ներկաներին, շեշտելով, որ Հայաստանյայց առաքելական եկեղեցին Մայր Աթոռ ս. Էջմիածնի հովանու ներքո, իր աստվածատուր, հոգևոր հայրենասիրական առաքելությունը կկատարի հայ ժողովրդի ծոցում, թե՛ Մայր հայրենիքի մեջ և թե՛ սփյուռքի բոլոր տարածքի վրա, մեր սրբազան նախնիների ոգով և ներշնչումով, բովանդակ հայության գերագույն շահերի գիտակցությամբ: Հայոց Հայրապետը Իր ոգևորիչ պատգամի վերջում սրտագին բարեմաղթություններ է անում հայ եկեղեցու պայծառության, մայր հայրենիքի և բովանդակ հայ ժողովրդի բարօրության համար, գալիք պայծառ օրերի հեռանկարներով խանդավառ:

Ամանորի սեղանների շուրջ ստեղծված խանդավառությունը ավելացնում են հոգևոր ճեմարանի սաները, իրենց երգերով ու արտասանություններով:

Ճեմարանի երգչախումբը, երաժշտության դասատու Խորեն Մելխանեջյանի ղեկավարությամբ, կատարում է «Սեղանն է առատ», «Կաղանդի երգ», «Կենաց երգ», «Հայոց գինի», «Գարուն Երևան», «Խումար պառկե», «Այ Ֆորկա», «Էրեբունի» խմբերգերը: Գ լսարանի ուսանող Հովհաննես սրկ. Գրվզգյանը արտասանում է Սիմեոն Երևանցու «Նոր տարի»-ն, նույն լսարանից Հակոբ սրկ. Նալբանդյանը՝ Արամ Արմանի «Գազել հայրենի ձմռան մասին»-ը, Ա լսարանցի Տիգրան Սահակյանը՝ Գեղամ Սարյանի «Մաղթանք նոր տարվա առթիվ», նույն լսարանից Խաչիկ Խաչատրյանը՝ Ս. Վահունու «Օրացույց»-ը և Աբրահամ սրկ. Մարգարյանը՝ «Էջմիածին» ժողովրդական տաղը:

Գ լսարանի ուսանողներ Հովհաննես և Արարատ սարկավագները դաշնամուրի վրա նվագում և երգում են Ա. Բաղդասարյանի «Գայանե»-ն, Բ լսարանցի Վարդան Տեվլեքյանը՝ Հելլերի «14-րդ Էտյուդ»-ը, Գ դասարանցի Հակոբ Քյուփելյանը՝ առաջին վալսը, Ա լսարանցի Արտաշես Մուշեղյանը՝ Չայկովսկու «Հիվանդ Պուպրիկը», Ա լսարանցի Խաչիկ Խաչատրյանը՝ Ա. Խաչատրյանի «Անտանտինա», և Ա դասարանցի Ավետիս Արթինյանը՝ Բեթհովենի «Սոնատան»:

Հանդիսության ընթացքում ուսանողության ուղղած և նոր տարվա խոհերով համակված հուզիչ ու ջերմ ելույթներ են ունենում ճեմարանի դասախոսներ Ա. Հատիտյանը, Գր. Գյուլյանը, Պ. Շահբազյանը, Ս. Անթոսյանը, Ս. Հովիվյանը:

Մի պահ հանգչում են դահլիճի լույսերը, մոմերի դժգույն ու պլպլացող նշույլների ներքո մի խումբ ուսանողներ կատարում են ծննդյան երգեր՝ «Խորհուրդ մեծ և սքանչելի», «Ով զարմանալի», «Այսօր ձայնն հայրական» և օտար լեզուներով ծննդյան այլ մեղեդիներ, Փրկչի Աստվածահայտնության և Ծննդյան մեծ խորհրդի բերկրանքը բաշխելով բոլոր ներկաներին:

Ավելի ուշ, ընդհանուր խանդավառության և ուրախության մեջ, հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Ներսես ծ. վարդապետը սրամիտ ու դիպուկ «կաղանդչեք»-եր է բաժանում միաբանությանը և դասախոսներին հաջող ու համեղ բնութագրումներով:

Գիշերվա ժամը 23-ին, խմբովին երգված «Հայր մեր»-ով և Հայոց Հայրապետի «Պահպանիչ»-ով ավարտվում է նոր տարվան նվիրված հանդիսությունը հոգևոր ճեմարանի հարկի տակ:

Շնորհավոր Նոր տարի: